կան տագնապը և Պաշտօնարանը հրաժարեցաւ ամբողջովին։ Ումբէրտոյ թագաւորը նորէն զՊուգլինի կոչեց նոր պաշտօնարանը կազմելու, ունկից զուրս մնացին Վիսկոնտի Վենոստա և Ծանարդէլլի։ Նոր պաշտօնարանը ոչ աջակողմեան էր, ոչ ձախակողմեան և ոչ արմատական. չպարունակէր նաև ազդեցիկ կարողութիւններ։

Մայիս 24ին՝ քիչ ժամուան մէջ խոստովանութեամբ և հաղորդութեամբ կը մեռնէր, սրտի հիւանդութենէ, Իտալիոյ ծովային զօրութեան նշանաւոր պաշտօնեայն Բէնէդէտտօ Բրին, որ միաբան ընդ Սէն Բոն ծովակալին, գաղափարեր և ի գլուխ հաներ էր իտալական ընտիր նաւատորմիղ մը։ Բրին 65ամեայ էր և առաջին անգամ 1876ի պաշտօնեայ եղած էր Նաւային զօրութեան։ Ցայնժհետէ մասնակցած էր շատ մը վարչութեանց, նաև իբրև պաշտօնեայ Արտաքին Գործոց։ Փիէմոնթեցի ըլլալովը, անպայման հաւատարմութիւն ունէր առ Գահն Սավոյիոյ՝ և թագաւորը զինքը կը յորգէր իբրև թանկագին բարեկամ մը։ Ումբէրդօ լսելով Բրինի ծանր վիճակը, անմիջապէս գնաց նորա տունը, բայց մեռած գտաւ զնա և գրկելով դիակը, յորդ արցունքով համբուրեց զայն։ Թագաւորը կորսնցուց աննման և հաւատարիմ բարեկամ մը, և Իտալիա ծովային զօրութեան մեծ պաշտօնեայ մը։

## ՃԱՊՈՆ

Ճապոն վարչութիւնը որ ըստ Սիմոնսէքի դաշանց գրաւած էր չինական Ուէյ–Հայ–Ուէյ նաւահանգիստը, մինչև որ վճարուէր չին–ճապոն պատերազմին տուգանքը, արդ ընդունած ըլլալով վերջին գումարը, թողուց զՈւէյ–Հայ Ուէյ, զոր անմիջապէս գրաւեց անգղիական նաւատորմիղը նոյն պայմանովք, որովք Ռուսաստան գրաւեր էր զՊորտ Արթըր։

## ՅՈՒՆԱՍՏԱՆ

Հեռագիրք կը ծանուցանեն որ Թուրք բանակը կանոնաւորապէս կը քաշուի Թեսալիայէն։ Ըստ Լորդ Սոլզպըրիի առաջարկութեան, տուգանաց վերջին մասը այն ատեն պիտի վճարուի առ Օսմանեան պետութիւնը, երբ Թուրք յետին զինուորը ելլէ Թեսալիայէ։

Կրետէի վիճակը նոյն է ինչ որ անցեալ ամսոց մէջ։

Մ–Ն․

## ՈՂԲԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

### Ա

«Մայր, ինչ մայրուր է, ինչ սիրուն
Կարկաչահոս այն քաղցր առուակ:
Ջուրը սիրեմ սիրով անհուն,
Այն ջուր կաթի պէս անուշակ:
— Ըզգուշացիր, Գառնիկ որդեակ:

— «Գայլխազներու մէջէն յուշիկ
Կ'անցնի կ'երթայ երկայն քարակ.
Հոն կը դիմէ ծարուող թռչնիկ,
Ես ալ, թ'ուզես մայր սիրունակ…
— Չըլլայ թէ,. մի, Գառնիկ որդեակ:

— «Փըթթին ափունքը մարեմխոտ,
Գեղձ քան ըզըմուրդ, քան ծիւն ճերմակ,
Վարդ և ծոթրին անուշահոտ,
Մանուշ և թիւմ գոյն մանիշակ:
— Մի երթար հոն, Գառնիկ որդեակ:

— «Ճիւղերուն մէջ վարդին վայրի,
Ճիշդ վերեւէն սիրուն առխակ
Ջըգէ ձայնիկն իւր արծաթի,
Ո՜հ շատ քաղցր է այն երգանակ:
— Մի լսեր մի, Գառնիկ որդեակ:

— «Երբ կը նայիմ վերէն յանախ
Տեսնեմ առուին հոն ի յատակ
Ճերմակ բուրդով մէկը չըքնաղ.
Կարծեցի թ'էր լին ըղմանակ:
— Մի հաւատար, Գառնիկ որդեակ:

— «Ի՜նչ անհամ է խումն ի մըսոր.
Խոտն է չոր, դաշտն է դըժընդակ.
Կուզեմ խըմել քիչ մը պաղ ջուր,
Տաս քիչ, քառորդ մը, կէս բաժակ:
— Մի խըմեր մի, Գառնիկ որդեակ»:

digitised by A.R.A.R.@

Թ

Մինակ՝ մարգին մէջ իրիկուան՝
Գառնիկ ըրաւ իրեն փափաք.
Եւ թողլով խոտը ծաղկահամ
Խոյացաւ դէպ ի այն առուակ:
Ծարաւ էր նա. թըշուա՜ռ Գառնեակ:

Զով զով խըմեց ջրիկն այն պայծառ
Որ հոսէր իւր ոտներուն տակ.
Մըրմըռալով. «Քարոզն հոն վար . . . ».
Եւ հոն վար մայրն իրեն որդեակ
Կանչէր իրեն թըշուառ Գառնեակ:

Գայլը եկաւ մութ գիշերով.
Տեսաւ Գառնիկը միայնակ.
Դեռ չըխըմած, մէկէն, շուտով
Ցարձակեցաւ՝ սիրտ դըժընդակ,
Լափեց կըլլեց այն խեղճ Գառնեակ:

Կըրէր վայրի վարդին թըփիկ,
Ծոթրին և թիւմ գոյն մանիշակ,
Բուրդէ կարմիր չորս գընդակիկ,
Երբեմըն ձեան պէս ըսպիտակ . . .
Այս Գառնիկին էին նըշխարք:

Հ. Պ. ՏԸԼԱՔՈՐԴ

## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ՀԱՒ

ՍԻՐԱՄԱՐԳԸ

Ճամբուս վրայ ինչ կեցեր ես,
Շուտ կորսըւէ սըկէ տեսնեմ.
Դեռ չե՞ս գիտեր, հաւ աներես,
Որ ես թռչնոց թագուհին եմ:

ՀԱՒԸ

Ինչ կը հրես, ո՞վ անիրաւ,
Դու սիրամարգ ամբարտաւան.
Զարդէդ ի զատ ինչ ունիս լաւ,
Որ եղեր ես ինքնահաւան:

ՍԻՐԱՄԱՐԳԸ

Բան մը հարկաւ գիտէր Աստուած
Որ ինծ տուաւ այս փետուրներ.
Ծիածանին և թէ ծաղկանց
Փայլին վրաս բոլոր գոյներ:

ՀԱՒԸ

Բաւական չ՚է ըլլալ փայլուն,
Պէտք է ըլլաս քիչ մ՚ալ ազնիւ.
Հպարտ, գոռոզ քու ձեւերուն
Չի հաւնողներ են բազմաթիւ:

ՍԻՐԱՄԱՐԳԸ

Ազնուական ցեղէ մըն եմ,
Խրոխտ ըլլալ ինծ ամօթ չ՚է.
Պէտք է քալեմ ես սիգաճեմ,
Անարգ հաւը թող բարբանջէ:

ՀԱՒԸ

Քու արժանիքը ցեղային
Չի տար պատիւ քեզ անձնական.
Դուն ջանա որ միշտ պիտանին
Պարծանքդ ըլլայ քու խնկական:

digitised by A.R.A.R.@